Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի 2019թ.
դեկտեմբերի 7-ի թիվ 11 նիստում
/Ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան
«07» դեկտեմբերի 2019թ.

ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ ԳՊՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

(փոփոխություններով)

1. Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ ԳՊՀ կամ Համալսարան) մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնառության արդյունքները, ինչպես նաև ուսումնական մոդուլների կրթական վերջարդյունքները ենթակա են մշտադիտարկման, վերանայման ու բարելավման:

2. Ուսումնառության արդյունքները վերլուծելիս՝ հաշվի են առնվում ուսանողների, շրջանավարտների, դասախոսների, գործատուների, պրակտիկաների ղեկավարների, ատեստավորող հանձնաժողովների նախագահների ու անդամների առաջարկությունները, պահանջներն ու նկատառումները, արտաքին փորձաքննությունների և բուհի ինքնավերլուծության անկախ և օբյեկտիվ գնահատականները՝ մշակված կրթական ծրագրերի ակադեմիական չափորոշիչների (ելքային արդյունքների) ապահովման վիճակի և ծրագրի իրականացման որակական այլ ցուցանիշների վերաբերյալ, առաջավոր բուհերի նմանատիպ ծրագրերի վերջնարդյունքների համադրական վերլուծության արդյունքները, մասնագիտական կառույցների, այլ շահառուների պահանջներն ու սպասելիքները:

3. Ուսանողների պահանջներն ու ակնկալիքները բացահայտվում են տարեկան առնվազն 2 անգամ կիսամյակների ավարտին թղթային կամ էլեկտրոնային տարբերակով կազմակերպվող հարցումների միջոցով (Հավելված 1, 2):

4. ԳՊՀ ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների վերաբերյալ իրենց նկատառումներն են հայտնում պրակտիկան անցկացնող կազմակերպության, ինչպես նաև ԳՊՀ-ի կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարները:

5. Ուսումնասիրվում և հաշվի են առնվում նաև ԳՊՀ շրջանավարտների կարծիքներն ու առաջարկությունները։ Ուսումնասիրությունները կարող են կատարվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր հարցումների միջոցով (Հավելված 3)։

6. Դասախոսների կարծիքներն ու պահանջները մշտապես քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետների խորհուրդների, մեթոդմիավորների, ռեկտորատի, գիտական խորհրդի նիստերում և հաշվի առնվում նոր ուսումնական տարվա ուսումնական գործընթացը պլանավորելիս և կազմակերպելիս (Հավելված 4)։

7. Գործատուների պահանջները բացահայտելու նպատակով տարեկան առնվազն մեկ անգամ կազմակերպվում են հարցումներ (Հավելված 5)։

8. Ուսումնառության արդյունքների վերանայման հիմք են հանդիսանում ԳՊՀ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների եզրակացություններն և առաջարկությունները։